Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2020թ. փետրվարի 17-21-ը, Կորեայի Հանրապետություն, Սեուլ

4. Հրավիրող կողմը.

Համաշխարհային Բանկ և Կորեայի Հանրապետության Ազգային առողջապահական ապահովագրական ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակը «Հայաստանի, Վրաստանի և Կորեայի միջև գիտելիքների փոխանակում առողջության ապահովագրության վերաբերյալ» ուսումնական այցն էր:

Այցի նպատակն էր ծանոթանալ առողջության ապահովագրության ոլորտում Կորեայի զգալի ձեռքբերումներին: Այն լավ հնարավորություն էր ծանոթանալու Կորեայում առողջության ապահովագրության ազգային ծառայության համակարգին և վերջինիս իրականացման սկզբունքներին:

6. Քննարկված թեմաները.

Նստաշրջանը խրախուսում էր բանավեճը մասնակիցների միջև գիտելիքների ու կարծիքների փոխանակման նպատակով՝ հաշվի առնելով ծառայությունների մատուցման և կայուն ֆինանսավորման ուղղությամբ երկրների փորձը:

Քննարկվեցին առողջության ապահովագրության ազգային համակարգի ներդրման համար անհրաժեշտ պայմանները, հիմնական սկզբունքները, մասնակից երկրների առողջապահական համակարգի ֆինանսավորման մեխանիզմները, արդի վիճակն ու առկա մարտահրավերները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի է ունեցել հանդիպում Կորեայի Ազգային առողջապահական ապահովագրական ծառայության նախագահ Յոնգ-Իկ Կիմի հետ:

Հանդիպմանը մասնակցել է նաև Համաշխարհային բանկի պատվիրակությունը:

Յոնգ-Իկ Կիմը խոսել է նման փոխանակման ծրագրերի և միջոցառումների կարևորության մասին՝ հաշվի առնելով այն, որ Կորեայի առողջապահական ապահովագրական համակարգը, ձևավորվելով 1977 թվականին, մեծ հաջողություններ է գրանցել և օրինակելի է աշխարհի շատ երկրների համար:

Նա նշել է, որ կորեական կողմն ուրախ է կիսվելու իրենց փորձով այլ երկրների ներկայացուցիչների հետ:

Արսեն Թորոսյանը կարևորել է առողջության համապարփակ ապահովագրության ներդրման կորեական հաջողված փորձի ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով, որ Հայաստանը ևս ընտրել է այդ ճանապարհը և գտնվում է հանրային առողջապահական ապահովագրական համակարգի ներդրման սկզբնական փուլում, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնել կորեական կողմի հետ փոխադարձաբար կիսվել Հայաստանի առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի գործունեության հաջողված փորձով:

Կայացել է նաև հանդիպում Կորեայի միջազգային համագործակցության գործակալության (KOICA) փոխնախագահ Բաեկ Սուկհիի հետ: Կողմերը քննարկել են համատեղ զարգացման ծրագրեր իրականացնելու հեռանկարները և հնարավորությունները:

Արսեն Թորոսյանը շնորհակալություն է հայտնել վերջերս Կորեայի արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված ծրագրի համար, որի շրջանակներում Հայաստանի առողջապահության նախարարությունը ձեռք է բերելու ուլտրաձայնային սարքավորումներ և հանձնելու մարզային բժշկական կենտրոններին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կորեայի Ազգային առողջապահական ապահովագրական ծառայության նախագահ Յոնգ-Իկ Կիմի հետ հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են նաև փորձագետների փոխանակությունը երկրների միջև և պայմանավորվածություն ձեռք բերել ապագա համագործակցության համար:

Համաշխարհային բանկի պատվիրակության ղեկավար Ադաննա Չուկվուման ընդգծել է երկրների միջև երկխոսության ստեղծման կարևորությունն արդեն կայացած համակարգերի մասով և ավելացրել, որ Համաշխարհային բանկը նույնպես շարունակելու է աջակցել Հայաստանին՝ բարեփոխումների ուղղությամբ:

Քննարկվել է նաև երկու երկրների ոլորտային գերատեսչությունների միջև փոխըմբռնման հուշագիր ստորագրելու հնարավորությունը:

Հանդիպման վերջում Արսեն Թորոսյանը կորեացի փորձագետներին հրավիրել է այցելել Հայաստան՝ ուսումնասիրելու վերջին տարիներին իրականացված աշխատանքները:

Կորեայի միջազգային համագործակցության գործակալության փոխնախագահի հետ հանդիպման ընթացքում վերջինս առաջարկել է հայ մասնագետներին մասնակցել Կորեայում իրականացվող առողջապահական դասընթացներին՝ մասնագիտական հմտությունները բարձրացնելու համար:

Հանդիպմանը քննարկվել է նաև ապագայում ավելի լայնամասշտաբ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններն ու ընդունված որոշումները կյանքի կոչելու համար կողմերը պատրաստակամություն են հայտնել պարբերաբար իրականացնել աշխատանքային կարգով քննարկումներ՝ հեռահաղորդակցման հնարավոր միջոցներն օգտագործելով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

25 փետրվարի, 2020թ.